

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/2

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 16.09.2014 թ-ի թիվ 5010365 ակտի դեմ:

«ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ն 2012 թ-ի 2-րդ, 3-րդ, 4-րդ, ինչպես նաև 2013 թ-ի 3-րդ և 4-րդ եռամսյակներում ԻԻՀ-ից ներկրել է դիզելային վառելիք և նույն եռամսյակներում իրացրել է: Ներմուծման պահին մաքսատանը կատարվել է մաքսագերծման բոլոր անհրաժեշտ մուծումները, ներառյալ բնապահպանության վճարները:

Դիզելային վառելիքի իրացմանը համապատասխան կատարվել է պետական բյուջեի բոլոր մուծումները: Որևիցե հարկատեսակով պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտքի մասին Կապանի ՏՀՏ-ն կամ ՕՀՎ 19-րդ բաժինն անմիջապես ծանուցել է «ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ին, և նշանակվել է վարչական տուգանք՝ հարկը ժամանակին չմուծելու համար: «ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ն դադարեցրել է իր գործունեությունը 2014 թ-ի փետրվարի 1-ից և ոչ մի ծանուցում չի ստացել Կապանի ՏՀՏ-ի կամ ՕՀՎ 19-րդ բաժնից լրացուցիչ բնապահպանական մուծումներ կատարելու համար: Եթե ժամանակին իրազեկեին բնապահպանական վճարի կրկնակի մուծման վերաբերյալ, «ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ն դիզելային վառելիք չէր ներկրի, որպես ոչ շահավետ գործարք: Բացի այդ, նոր «Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ հաշվետվությունը» ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել է 13.01.2014 թ-ին, որի հավելվածով էլ պետք է ներկայացվեր բնապահպանության վճարի հաշվարկ հաշվետվությունը:

«ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ն չէր կարող հաշվետվություն ներկայացնել 2012 և 2013 թ.թ.-ին, քանի որ հաշվետվության նոր ձևը, որով պետք է ներկայացվեր դիզելային վառելիքի բնապահպանական վճարները, ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել է 13.01.2014 թ-ին: Հետևապես բնապահպանական վճար, ինչպես նաև տույժեր և տուգանք չպետք է հաշվարկվեր:

Ելնելով վերոգրյալից՝ «ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ն համաձայն չէ 16.09.2014 թ-ի թիվ 5010365 ակտի 9-րդ կետով բնապահպանության և բնօգտագործման վճարների գծով հաշվարկված պարտավորությունների հետ և խնդրում է դրանք վերանայել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 23.07.2014 թ-ի թիվ 5010365 հանձնարարագրի համաձայն «ՍՈՒՐՕԻԼ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման

ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 16.09.2014 թ-ի թիվ 5010365 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով բնապահպանական վճարի գծով գանձման է առաջադրվել ընդամենը 3.107.857 դրամ:

Ակտի 9-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերության կողմից «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ժամկետներում չի հաշվարկվել և չի ներկայացվել բնապահպանական վճարների եռամսյակային հաշվետվությունները, ինչպես նաև պետական բյուջե չի կատարվել բնապահպանական վճարի գծով վճարումներ: Համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 2012 թ-ի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 2013 թ-ի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար չի հաշվարկվել ընդհանուր գումարով 1.196.727 դրամ բնապահպանական վճար, որը ենթակա է վճարման բյուջե:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար վճարողից գանձվում է տուգանք՝ վճարման ենթակա վճարի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով՝ գումարով 1.097.600 դրամ:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Բնապահպանական վճարները չվճարելու համար գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.2 տոկոսի չափով՝ գումարով 813.530 դրամ: Բնապահպանական վճարի գծով ենթակա է վճարման ընդամենը 3.107.857 դրամ:

Ակտի 9-րդ կետով բնապահպանական վճարի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար վճարողից գանձվում է տուգանք՝ վճարման ենթակա վճարի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի վճարի՝ օրենքով սահմանված վճարման ժամկետին չվճարված գումարը: Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վճարը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու (սահմանված հաշվարկ-հաշվետվություններում վճարի գումարը ցույց չտալու, պակաս ցույց տալու կամ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելու) դեպքում գանձվում է օրենքին համապատասխան հաշվարկված՝ թաքցված կամ պակաս ցույց տրված վճարի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնող վճար վճարողների նկատմամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1694-րդ հոդվածի կիրառման առումով անհրաժեշտ է հիմք ընդունել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարումը կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա

կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-175-Ն օրենքով նախատեսված լրացումները, որոնք կապված են հաշվարկ-հաշվետվություններում վճարի հաշվարկման հետ, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնող վճար վճարողների նկատմամբ նշված իրավական հետևանքներ կարող են առաջացնել ՀՀ ֆինանսների նախարարի 05.06.2002թ. N444-Ն հրամանում համապատասխան փոփոխություն կատարվելուց հետո՝ ՀՀ ֆինանսների նախարարի 27.11.2013թ. N1045-Ն հրամանն ուժի մեջ մտնելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցը (տուգանքը) քննարկվող դեպքում կիրառելի չէ:

Ինչ վերաբերվում է բնապահպանական վճարը սահմանված ժամկետում չվճարելու համար Ակտի 9-րդ կետով հաշվարկված տույժերին, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճարումներն ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.2 տոկոսի չափով: «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների արդյունքում դեռևս համապատասխան փոփոխության չի ենթարկվել, ինչը սակայն վճար վճարողին չի ազատում բնապահպանական վճարները հաշվարկելու և վճարելու պարտավորությունից: Վճարումներն ուշացնելու համար չվճարված վճարների նկատմամբ պետք է հաշվարկվեն տույժեր, հիմք ընդունելով նույն օրենքի 12.1-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, այն է՝ վճարների պարտավորությունները հաշվառվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով (այսինքն՝ տվյալ վճարի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ անկախ հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման ամսաթվից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕՀՎ 16.09.2014 թ-ի թիվ 5010365 ակտի 9-րդ կետից նվազեցնել ընդամենը 1.097.600 դրամ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

